

3844

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊՐԵՄԻՈՒՄ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻՈՒՄ
ԱՐԴԱՎԱԾ ԽԱՐՔԻ ԲԱՐՁՐՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՏԱՄԱԳԻԹԵԱՄԱ

ՏԵՐ ԱՎԱՐՔԵԱՏՐՈՒ ՅԱՅ ՀԱՆԴԵՍՈՒ Ա

ՆՈՐ Հ Ա Յ Ա Յ

Հ Ա Յ Ա Յ Ա Մ Ի Ա Մ Ի Ա Մ Ի Ա Մ

Մ Ր Բ Ա Յ Ա Յ Ա Յ

1877

9(47.925)

Հ - 85

لار باش بار خانه
9(47.925)

2-85 ՀԵՄԱԹՈՅՑ

ՊԵՏՄԱՆԻԹԻՒՆ ՀԵՅՈՑ

Ի ՏՊԱԳՐՈՒԹԵՆԵ ՎԵՆԵՏԿԱՅ

ՓՈԽԵԱԼ ՅԱԾԿԱՐԳԻԿ ԲԱՐԲԱՐ

ԶՈՒՂԱՅԵՑԻՈՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՐ

ՏԵՐ ՍԵՂՐԵՍՅՐՈՍԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՆԱՓՐԿՉԵԱՆ

ՄՐԲՈՅ ՎԱՆԱՑ

1877

Ա. Գ. ՄԻՔԱՅԵԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՀԱՐԱՐԱԿ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԵՈՐԳԵԱՅ Դ .

ՄՐԻԼԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

ՑԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՄՐԲՈՅ ՎԱՆԱՑ

ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՈՒՏԻ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



2004

93927-62

2073 - 2002

Որպէս՝ ի ակահպանութիւն Քրիստոնէան ական սրբոյ կրօնիս պահատէ ամենեցուն վերծան նել զսուրբ Գիրս ողջամիտ վարդապետուք . նոյնպէս և՝ ի ակահպանութիւն միութեան աղգութեան՝ պիտի մեզ ունել դքանջիկ տեղեկութիւն աղջային պատմութեան վերայ : Յօրում հետազոտելով ոչ միայն կրդանեմք զժադումն ազգիս, այլև ընդ նմին հաստատուն կրտեսանմքը զհանդէս ապտուած պաշտութեան :

Անշուշտ Հայն է սերունդ Յաքեթի անդրանկանն Նոյի, որոյ թռողին որդին Հայկ աստուածական հանդիսացեալ սպանէց զիթինարին Բէլ զառաջնորդն կուսակաշտութեան . և ինքն եղւ նահապետ ազգիս մերոյ : Եւ յառուրս գալստեան վրկչին մերոյ Յիսուսի յաշխարհու՝ անդրանիկն ի թագաւորս քրիստոնէից՝ Աբգար արքայն Հայոց հաւատաց՝ ի Քրիստոս Աստուած . ընդ որ և ազդ մեր ընդ քրիեաց ըզհաւատ քրիստոնէութեան, վասն որոյ բաղում հոյակապ նահապետք մեր և նահատակք քաջ

ՀԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Պատմութիւն Հայոց

Հաշխանութիւն Հայկականց

Դիաս Ա.

Ի Հայկաց ոհոեալ մէջ ոնքով ։

Արդ տեսանելով իմ զկարեռութիւն
մանաւանդ և զսակաւուի Պատմութեան Հա-
յոց՝ ի պէտս Հայկազնեայ մանկուոյ Դպրատանց
ջուղայ ։ այնր աղագաւ զհամառօտութիւն նոյն
պատմութեան Հայոց տպագրեալն ՚ի Անեստիկ
1871 ։ փոխելով՝ ՚ի գիւրիմաց ոճաշխարհիկ բար-
բառոյս ջուղայ՝ Հանգերձ մասնաւոր յաւելուա-
ծովք, և ՚ի վերջէ կցելով զբանասիրական տա-
ղաշափութիւն իրորհրդածեալ՝ ի վերայ Տէրուե-
Հայկազնաց, կրփութամ օժանդակութեամբ
Պատուեալ Համազգեացս ՚ի լոյս ընծայել
զայն, և ակնկալիմ այսու գուզնաքեայ վաստա-
կօք Հանդիպել բարեհաճութեան ընթեռնեաց
Պատմութեանս ։

Տէր Ակրեստրոս Յովհաննէսէան
Նոր Ջուղայեցի

Հայոց Արք Հայոց ազգն ունենց է առաջեկել-
պիսն ։ Եղինահապետի Յաբեթ որդուցն ։

Հայոց եղեւ մեր ազգի նահապետն ։
Պ. Հայկ որ Յորդումայ որդին էր, Յորդուն
գամերի, և զամերն Յաբեթի ։

Հ. Հայկ մեր ազգին ինչպէս նահապետ եղեւ ։
Պ. Իւր ազգատումի վերայ Տէր և գլուխ եղեւ,
որոյ անուամբն մեր ազգն Հայք և մեր երկիրն
Հայաստան կոչուեց ։

Հ. Ե՞րբ սկսաւ մեր ազգի Տէրուին ։
Պ. Վահեպեղիցն փոքր ժամանակից յետ ։
Հ. Հայկ իւր Տէրուին ինչպէս մկսաւ ։
Պ. Երբոր Բարել լն եկող և աշխարակ շինող
մարդկանց լեզուն խառնակեցաւ, և բէլն կամե-
լով բոլորի վերայ բռնութ իշխել, և ենքն ոյ նը-

ման պաշտուել բայց արին չայկ չկամելով նրան
չնազանդել, գարձաւ չայաստան 300 կտրիճ
մարդիկներով . որն որ իւր որդիք թռունքն է
ին . և այլ հաւատարիմ ընկերք նոցա (2346) :

Հ. Ինչերբոր այս բանս լսեց ինչ արէց :

Պ. Հապարտութ պատգամ ուղարկեց չայկին ոք
պայ չնազանդի իւրն :

Հ. Չայկ այս բանէրս լսելով չնազանդէց բէլայ .
Պ. Ու. այլ իւր քաջ տղէրքովն ծառայ բնէրովն
և ուրիշ հաւատարիմ մարդիկներով բէլայ ան-
համար բազմութ գէմ գնաց . որոնք եկէլին իւր
վերայ :

Հ. Ինչ չպէս պատերակմեցան չայկն և բէլն .

Պ. Երբ որ երկու կողմիցն սաստիկ կը պատե-
րազմէին , բէլն զարհուրեալ յետ կը քաշուէր
փոքր զօրքով , չայկ վազէց նորա վերայ , տուէց
նետովն , և էնտեղ սպանէց փոէց ամպար տաւան
հսկային :

Հ. Չայկ բէլայ մարմինն ինչ արէց :

Պ. Օմուել տալով տարաւ չայաստանի չարք
կոչուած երկիրն , և մի բլրի վերայ թաղէց , ու-
զելով որ ամ մարդ տեսանի և իմանայ ամպարտա-
ւան մարդոյ վիճակն , նա և իւր աշխարհքիս ա-
րած բարիքն :

Հ. Չայկ բէլն սպանէլին յետ ինչ արէց և ո՞յ-

չափ ապրէց .

Պ. Կամելով իմացնելիւր արդաքսէր և անաշխար-
հակալոգին թշնամին հալած ելին յետոյ գար-
ձաւ եկաւ չայաստան . քաղաքնէր շինէց և բա-
րեկարգու ինէր արէց , և 400 տարի չափ ապ-
րելէն յետ ինազաղութ մեռաւ (2265) :

Հ. Ինչ բնուի և ինչ ձիրք ունէր չայկ :

Պ. Մարմնով կտրիճ մարդէր , մեծահասակ և
գեղեցիկ , ուղոր մազերով , կարմիր երեսով , վառ-
վուուն աչքէրով , ձեռներով ևս շատ ձարպիկ
և արագաշարժ , իսկ մտաք՝ բարակամիտ , հնա-
րա գէտ , աշխարհաշէն և աներկիւղ սրտով :

Հ. Չայկայ ժամանակումն ինչ մանաւոր բան
պատահէց չայաստանի մէջ :

Պ. Ես 950 տարեկան վախճանեցաւ , և թագ-
ուէց նա Կապատ լերան վերայ . նոյնպէս Նոյեմ-
դարա Նոյի կինն ևս թագուէց մարանդ գաւա-
ռումն :

Հ. Չայկայ տերէն ովլ կը բարգուէց :

Պ. Արմենակ :

Հ. Ովլէր Արմենակ :

Պ. Չայկայ քաջ և հայրենասէր ամսդք սնիկ որ-
դին , որ նորա տեղն յաջորդէց :

Հ. Արմենակ ինչ գործ կատարէց իւր չայկա-
նասիրուեն գայիւ :

Պ. Խւր Խոռ և Մանաւաղ եղամարքն թւղէց
Հարք գաւառում, և ինքն զնաց արհենեան
կողմէրն, ին տեղարկնորում չինուիք գձէց :

Հ. Արմենակայ միւս եղամարքն Բնէ ելան .

Պ. Եսկու եղամարքն ևս այնքան բազմացան, որ
Հազարաւոր տարի նոցա ցեղերն գիշացան իւր-
եանց անուամբն Խորխոռունիք և Մանաւաղեանք
կոչուելով : Նոյնպէս Բաղ՝ Արմենակայ որդւոյ
ցեղն ևս իւր անուամբն բզնունիք ասուէց :

Հ. Արմենակին ով յաջորդէց .

Պ. Արամայիս իւր որդին, որ Արմաւիր քաղա-
քն շինէց Երասխ գետի մոտն (1975) :

Հ. Ովէս Շարա և Բնէ գիտելիք կայ նորա վե-
րայ .

Պ. Շարա Արամայիսայ որդւոց միննէր, որ շատ
ուտել խմել կը միրէր . Տայրն ևս մի բարեբեր
երկիր ուղարկեց նրան, որ իւր անուամբն Շի-
րակ կօչուէց :

Հ. Արամայիսայ տեղն ով յաջորդէց .

Պ. Խւր Ամասիա որդին, որ իւր անուամբն Մա-
սիս անուամնէց Արարատ լեան :

Հ. Ամասիայի որդւոց վերայ Բնէ գիտելիք կայ .

Պ. Ամասիա երեք տղայ ուննէր Փառոխ, Ցուակ
և Գեղամ . առաջի երկիք է Տամար Սոկ Զակ Քալոք
շինէց որ նոցա անուամբն Փառախոս և Ցուակիրտ

Կոչուեցին, իւկ երսորդն զիզամ իւր արկնյա-
ջորդէց :

Հ. Գեղամայ վերայ Բնէ կը պատմէւի .

Պ. Միքանի տարի իշխելէն յիտոյ, յանձնէց տէ-
րուին իւր Հարմայ տղին, և ինքն Սկւան ծոլի
իգերքն բնակելով՝ այն տեզն իւր անուամբն կան-
էց Գեղարքունիք կամ Գեղամայ արքունիք և
ծովն ևս Գեղամայ ծով :

Հ. Ախակ Գեղամայ որդւոց վերայ Բնէ զիտելիք
կայ .

Պ. Ախակ իւր քաղցր Հայեցաւածքն և խօս-
ուածքի համար Ազու կոչուէց, որա բնակած
տեղի անունն Ախական կոչուէց կամ Սիւնիք.
Իսկ իւր տիրած օտար երկրնէրն Աղուանք :

Հ. Ովէս Հարմայ և իւր վերայ Բնէ մասնա-
ւոր մի գործ կը պատմէւի .

Պ. Գեղամայ որդին էր, ոորա Փամանակում
սկւան թշնամիք Հայաստանի վերայ վաղել և
տիրել, որնք որ Հայկայ և իւր որդւոց քա-
ջուե զործքէրն լսելով յառաջուց սարսափում
էին . բայց մի Փամանակ տնօղկալով մնուացուէլ էր,
այս իրաւացի երկիւղն մինչեւ Արամ կրկին եր-
կիւղ գձէց նոցա վերայ :



Պաս Բ.

ՅԱՐԱՄԱՅԻ ԲԻՆԱՀ ԵՊԱՐԿՈՅ :

Հ. ՈՎԿԵՐ ԱՐԱՄ.

Պ. Հարմայի որդին և յաջորդն :

Հ. Արամի առաջին թշնամին հվել եղեւ .

Պ. Ախուքար Մահաց իշխանն, որոյ գէմերթաւով Արամյիսուն հազար գօրքով, յաղթէց և նըրան բռնէց մի աշտարակի ծայրիցն մեխէց (1828)

Հ. Հայոց երկրորդ թշնամին հվել էր .

Պ. Բարշամ բարելացոց իշխանն որ նոյնպէս յաղթուելով սովանուէց Արամիցն :

Հ. Հապա երրորդ թշնամին հվել էր .

Պ. Պայտապիս կապադովիկիոյ իշխանն որ յաղթուելով փախաւ միջերկրական ծովու կողեաց մէջն :

Հ. Արամ Պայտապիսի երկիրնէրն ինչ արէց .

Պ. Առողին ևս տիրելով մշտկ անուամբ մնին իշխան դրէց էնտեղեւ պատու իրէց որ բոլորն էլ հայերէն խօսեն . որով էն տեղի անունն ևս փոքր չայք ասուէց, մշակայ բնակած տեղն ևս մաժակ, որ է Գայսէրի քաղաքն :

Հ. Արամայ վերայ ուրիշ ինչ իմանալու բանկայ. Պ. Այնոս Ասորեստանցոց թագաւորէն մար-

Քարտաղարդ մին պսպկ ստացաւ, և նորաւ երկ բորդն կոչուէց :

Հ. Ի՞նչ պատճառով Նինոս էս թագն ուղարկէց :

Պ. Ա ամն զի Արամայ քաջու ինէրից ակնած ելով ուզէց նորա բարեկամուին ստանալ :

Հ. Արամ հրչափ ժամանակ իշխէց և Երբ մեռաւ :

Պ. Յիսուն ութն տարի իշխէց և մեռնելով իւրն յաջորդ թողէց Արայ որդին :

Հ. Արայ լնչուր համար գնաց պատերազմ Ծառ միրամայ դէմ .

Պ. Արայ շատ գեղեցիկ լինելով՝ Ծամիրամ Աւսորեստանցոց ախտամուլ թագուհին ուզէց նըրան կին լինել . բայց Արայ յանձն չառէց և պատերազմ գնաց :

Հ. Պատերազմի վերջն ինչպէս ելաւ :

Պ. Արայ քաջութ կռուէց, բայց պատերազմի առք ժամանակումն վիրաւորից և մեռաւ. թէ պէտ և Ծամիրամ ապապարէլէր իւր գորքէրին որ նըրան չապանեն, կենլանի բռնեն (1769) :

Հ. Ծամիրամ թնչ արէց չայպստանի մէջ :

Պ. Հաւանելով մեր աշխարհքի դրիցն և օդի գեղեցկուեն, մի ամուր քաղաք և մի բերդ շինել տուէց Ծամիրամակերտ անուամբ որ Ան ևս կասուի . և մինչև այժմ կան էն ժամանակէն չինայք որմէրն :

Հ. Արային հվլյաջորդէց .

Պ. Յամիրամ Հայոց վերայ իշխան գրէց Արայի կարգոս որդին :

Հ. Յամիրամ և կարգոս Ենչպէս մեռան :

Պ. Յամիրամ և կարգոս Նինուասայ վերայ պատերազմ գնացին, որ էր Յամիրամայ որդին, և իւրնից ապստամբած . բայց աղթուելով երկուքըն ևս մեռան :

Հ. Կարգոսին հվլյաջորդէց .

Պ. Ինուշաւան իւր որդին, որ Թէպէտ և գերի ընկած էր Նինուասայ Ճեռն, բայց սիրելի լինելով նրան, ազատուեց գերուելից, և եկաւ տիրէց իւր հայրենեաց, երկար ժամանակ իշխէց շատ ինքով և մեռաւ :

Հ. Ովկ էր Պարետ .

Պ. Հայկայ միւս որդւոց ցեղերէն վէրեկած մի քաջ մարդ էր, որ Անուշաւանի տեղն նահապետ եղեւ . որովհետև Անուշաւան որդի չունէր (1662)

Հ. Պարետի վերայ Բնէ գիտելիք կայ, և նրան հվլյաջորդէց .

Պ. Աս շատ քաջուենէր արած ունի. իւրն յաջորդէց Արքակ .

Հ. Արքակին հվլյաջորդէց .

Պ. Օաւան . Զաւանին յաջորդէց Գառնիկ . Փառնակին՝ Սուր :

Հ. Սուր նահապետին վերայ Բնէ գիտելիք կայ .
Պ. Սուր որ իւր քաջուենէր համար այս պնունն ժառանգէց, շատ յաղթուինէր արէց ընդդէմ թշամեաց : Սորա ժամանակում Քանանացիք եարայէլ աղգից հալածուելով ոմանք Հայաստան եկան, յորոց ձեւացաւ Քանանիդէանց կամ Գլնթունեանց նախարարութին :

Հ. Սուրայ հվլյաջորդէց .

Պ. Հետ զհետէ յաջորդէցին Հաւանակ և Աւշտակ . որոց վերայ այստմուի չունեմք :

Հ. Հայկակ Ա Նահապետն Բնէ քաջուեն զործք արած ունի .

Պ. Ամինիդէս Ասորւոց թագաւորին յաղթէց . բայց նորա բեղոքոս յաջորդիցն յաղթուէց և մեռու (1369) :

Հ. Որինք յաջորդէցին Հայկակէն յետոյ .

Պ. Երկու հարիւր տարուանչստի մի ջոցումիշնեցին Հայոց վերայ սոքա . Ամրակ Ա . Առնակ, Հաւարշ Ա . Ն որայր, Աստամ, Կար, Գոռակ, Հրանտ, Բնձակ, Գղակ և Հօրոյ . որոց Վը մի գիտելիք չկայ :

Հ. Օարմայրի վերայ Բնէ կը պատմուի .

Պ. Տրոյացւոց օղնուի գնաց և շատ քաջուինէր արէց . բայց Աքիլ լեռի հետ պատերազմով մեռաւ (1182) .

Հ. Օարմայրէն մինչեւ Հակայորդին հրչափնաշատեւնէր նստան .

Պ. Գարեթէ չորս հարիւր տարուան միջոցումն տասնի չափ նահապետնէր նստան, որոց վեր մի տիղեկու ի շունենք . և սոքա են . Ծաւարշ Բ, Գերձ Ա, Արքուն, Գերձ Բ, Բազուկ, Հյ Յոււակ, Ամբակ Բ, Փառնաւազ Ա, Փառնակ Բ, և Հակայորդի :

Հաս Գ.

Ի Պիտոյրէ միջեւ Հայկալունց թագաւորութէ հարծանաւեն . և Կոստահալաց Ելիսանին :

Հ. Ո՞վ էր Պարոյր :

Պ. Հակայորդւոյ որդին էր, ոյ Հայոց առաջին թագաւորն եղւ :

Հ. Ի՞նչ պատճառ աւ թագաւոր պսակու էց :

Պ. Սարդանաբաղ Ասորւոց թագաւորիդէմ օդանուի գնաց Վարքակէս իշխանին և միարան յաղթեցին նմա . և ինքն Վարքակէսիցն թագաւորցաւ (746) :

Հ. Պարոյրի ժամանակ ուրիշ իմանլու արժանի բան եղւ :

Պ. Ադրամելէք և Սանասար Ասորեստանցւոց

թագաւորի որդիքն Հայաստան վախան, որոնք վերջումն մեծ ամեծ նախարարու ինէր ելան, դր Արծրունիք և Սանասունք կամ Սասունցիք :

Հ. Պարոյրէն յետոյ որինք թագաւորեցին :

Հարիւր տարուան չափ միջոցումն հինգ թագաւոր նստան, որոց վերայ մի յիշատակութի չունեմք . սոքա են Հրաչեայ, Փառնաւազ Բ, Պաշաճ, կոռնակ, Փառնու :

Հ. Հայկակ Բ ին վերայ ենչ գիտելիք կայ :

Պ. Եւարուգոդմնոսորի հետ երուսաղէմի վերայ գնաց, և էնտեղից Հայաստան բիրէց Ծամբատ անուամբ մի իշխան, յորմէ սերեցաւ բագրաւառնեցաց ցեղն բագարատ երևելի իշխանի անունիցն առնելով (605) :

Հ. Ո՞վ յաջորդէց Հայկակին :

Պ. Դւը որդին երուանդ առաջին՝ որ չորս տարի միան թագաւորելով մեռաւ, ոյ Սակաւեկեաց կոչուէց (565) :

Հ. Ո՞վ էր Տիգրան Ա :

Պ. Լըրուանդայ աղէն և Հայկազանց ամենից երևելի թագաւորն :

Հ. Ի՞նչուր համար Աժդահակ մարաց թագաւորն Տիգրանայ հետ թշնամացաւ :

Պ. Ո ան զի Տիգրան բարեկամութի արէց նիւքոսի չետ որ իւր թշնամին էր :

Հ. Մժգահակ ի՞նչ վարպետուի զորք դրէց
Տիգրանին մեռցնելու .

Պ. Տիգրանի Տիգրանուհի քոյրն իւրնկին առէց,
և նորա ձեռնովն ու դէց սպանել Տիգրանին :

Հ. Մժգահակայ չարուե խորհուրդն առաջ
գնաց .

Պ. Ոչ . Դուքի Տիգրանուհին Մժգահակայ
խորհուրդն ծածուկ իմացրէց իւր եղօրն :

Հ. Այս բանովն էիգրանուհւոյն մի վնասելա՞ւ .

Պ. Ոչ . որովհետև Տիգրան պատերազմն ու
շացրէց, որ քոյրն ժամանակ դանելով փախնէ
Աժգահակայ մոտեցն :

Հ. Պատերազմն թնչուիս եղէ .

Պ. Երրոր Կիւրոս իւր գորքովն եկաւ հաւառ,
Տիգրան նորա հետ միանին Աժգահակայ դէմ
գնացին . պատերազմի էն աաք միջւցու մն Տիգրան
քաջուց սպանեց Աժգահակին . որով սահ
տերազմն վերջացաւ :

Հ. Տիգրան պատերազմիցն դառնալին յետ թնչ
արար .

Պ. Մժգահակի կինն, ընտանիքն եռուիշ կերիքն
չայաստանի մէջ բնակեցուց, յորոց սերեցան
Վեհապազունք կամ Մուբացան կոչուած ցեղն :
իսկ Տիգրանուհի քոյրն Տիգրանակերտի կողմէրն
ընտակեցոց, յորմէ սերեցաւ ըստան կամ Յստանիկ

կոչուած աղատ ցեղն :

Հ. Տիգրան թնչպէս թաղաւորուի վարէց .

Պ. Շատ խելքով, շատ շինուինէր և բարե-
կարդուինէր արէց . և քառասուն և հինգ տա-
րի թաղաւորելին յետոյ մեռաւ . իւր տեղն յա-
ջարէց Ա.ահաշն իւր որդին :

Հ. Ա ահաշնի վերայ թնչքան կը պատմուի .

Պ. Խիստ քաջ լինելցն համար՝ վերէն շատ
առաջապեհնէր պատմեցին, և Ա.քացիք զինքն
կը պաշտէին : սորա ցեղն Ա.ահաշնիք կոչուէց
(520)

Հ. Ա ահաշնին նէլ յաջորդէց .

Պ. Որդւոց որդէի յաջորդէցին Առաւան, Կեր-
սեհ, Զարեհ, Արդոմ, Բայրամ, Ան և Վա-
հէ (351) :

Հ. Ինդէր Աղէքսանդր Ա.ահէի վերայ Եկաւ .

Պ. Ա ան զի Դարեհ պարսից թաղաւորին օդ-
ուուի էր ուղարկէլ Ա.ահէ :

Հ. Ի՞նչուէս մեռաւ Ա.ահէ .

Պ. Աղէքսանդրի դէքպատերազմնով շատ քա-
ջուինէր անելուն յետոյ՝ պատերազմի մէջ ընկա-
մեռաւ, և ովլաւ չայկազ մնյ թաղաւորուին
վերջացաւ (180) տարի դէմունին յետոյ
(323) :

Հ. Ա ահէիցն յետ չայաստանին նէլ կահըմք :

Պ. Մակեղոնացւոց կամ Ասորւոց թագաւոր
նէրն մին իշխան կուղարկէին որ չայտանին
կառավարէ . այս իշխանէն կուսակալք կառ
ուին :

Հ. Ո՞վ եղև առաջին կուսակալն :

Պ. Միջրան . որ Ազգային դրիցն ուղարկուէց
և հինգ տարի մնացէն յետոյ յետ կանչուէց
(319) :

Հ. Միջրանա տեղ ո՞վ եղեւ կու տակալ .

Պ. Կէպատղոմեռ , որ հայոց վի ծուռն աչ
քոլ կնայէր , էն պաճառով շատ նեղուինէր տըւ
ուէց հայոց :

Հ. Ո՞վ սգատէց զնոնա այս նեղու ինէրիցն :

Պ. Լդուարդ մեր քաջ նախարարն , որ Կէպա
տղոմէսին փախցրէց չայտանիցն :

Հ. Լդուարդ մինէկ իշխէց հայոց վերայ .

Պ. Ոչ մն զի Եւմենէս Մակեղօնացի իշխանի
միջնորդութն կրիին եկաւ Կէպատղոմէսին և
իբրև Ազուարդի երկրորդն կմնէր (317) :

Հ. Լդուարդ ո՞րչափ ժամանակ իշխէց :

Պ. Աւրիշ շատ քաջուինէր անելէն յետ հառ
տատուէց իւր իշխանութմէջ , և լդ տարի իշխե
ւէն յետ մեռաւ :

Հ. Լդուարդի տեղն ո՞վ ուղարկուէց կուսակալ :

Պ. Հրանտ . որում ևս յաջորդէց Արտաւազ

անուամբ իշխան , որ ապստամբելով Սելէկի-
ացւոց Անտիոքու գ , Թագաւորէն՝ ինքնագլ-
ւուխ իշխէց :

Հ. Յաջորդէց Արդաւազի ապստամբութն :

Պ. Վախենաւով Անտիոքոսիցն շատ ընծայիւք
խոսացաւ . հարկն տալ , որով կրկին ևս կուսա-
կալ եղև :

Հ. Արտաւազի տեղն ո՞վ գրուէց կուսակալ .

Պ. Արտաշիառ և Զահրատ հայ իշխաննէրն :

Հ. Օաչրատ և Արտաշիառ մինչև վերջն հա-
ւատարիմ մնացին Սելէկի ացւոց :

Պ. Ոչ հապա հոռմացւոց օգնութն ապլո-
տամբեցան և երկութն ևս թագաւորքեցին :
Զահրատ փոքր հայոց վերայ , Արտաշիառ ևս
մեծ հայոց վերայ . ուր որ Աննիաբաղ կարքե-
զոնացի մեծ զօրագետի ինրատովն Արտաշատ
քաղաքն շինէց :



Հ. Անտիոքոս Եպիփան երբոր լէց այս բանս
մնչ արեց :

Պ. Արտաշիառի վերայ պատերազմ գնացով
բռնութ հնագանշեցոյց :

Հ. Արտաշիառ էն և Զահրատէն վերջն սրբնք
իշխեցին հայոց :

Պ. Աղանից վերջն մի քանի Թագաւորնէր ևս
և տան չայա տան մինչև Արշակունայ ժամա-

Նաև բայց պատմութինէրն շփոթ լինելով՝ մի որոշ
բան չի իմացուել նոցա վեսայ : մի ս ն թէ նու-
ցա վեօջի թագաւորն եղէ Մորիկնու կէս Զահ-
ռատի տղէն (159) :



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՒԴԻ

Թագաւորուի Արշակունեաց

Պատ Պ .

ԽՎառարշակայ ունեալինչե ։ Արշակունիք Ա .

Հ. Ո՞վ էին Արշակունիք .

Պ. Պարթև կոչուած ազգիցն էին, յորոց Արշակ
անուամբ մի կորիչ թագաւոր եղեւ իւր ազգին .
իւր Արշակ թոռն ևս շատ կորիչ լինելով թա-
գաւորուին մեծացոյց, Հայաստանին ևս տիրէց .
և իւր Արդարշակ եղբայրն էնտեղ թագաւոր
դրէց (149) :

Հ. 2043 - 2002

Հ. Արդարշակ թագաւոր լինելուցն յետ ինչ
պատերազմ արար .

Պ. Մորփիւլիկեսի հետ պատերազմելով զին-
քըն սպանէց, որով և բոլոր Հայոց տիրէց :

Հ. Արդարշակ էնչ տեղ դրէց իւր աթոռն .

Պ. Մծրին քաղաքն, որ Ասորոց երկրին է Հայ-
աստանի մէջ տեղարէնքն է :

Հ. Արդարշակ Հայերին սիրէց .

Պ. Տեսնելով նոցա քաջուին և տիրասիրուին
էն աստիճան սիրէց Հայերին, որ հետեւէց գի-
տել և իմանալ այնպիսի պատուական ազգի
պատմուին :

Հ. Ուրեմն Արդարշակ գտմաւ ուզած պատմու-



իննէրն .

Պ. Հայաստանի մէջ չգտնէլով, Մարիքաս կտախնա անուամբ մինմ ուղարկեց նինուէ, որ հրթայ Էնտեղի գրատան միջիցն զտնի Հայոց պատմուին, ինչպէս որ դտու :

Հ. Աղարշակ ուրիշնէ բարեկարգուինէր արէց .

Պ. Լախարարաց և Արքունեաց մէջ շատ կարգէր կնելէն վէրջն՝ որոշէց ևս որ թագաւորի հետ միայն անդրանիկ որդին մնայ, միւսնէրն ուրիշ տեղ մնան :

Հ. Աղարշակին ովլյաջորդէց .

Պ. Արշակ Ա . իւր որդին, որ շատ բարեկարգուինէր և քաջուինէր արէց (127) :

Հ. Գլխաւոր քաջուին մինէ .

Պ. Պոնտաց ոց նուաճէց և վառն իւր յաղթուեն շան մի կոթող տնկէց ծովի եղերքն . և նիզակն տալով ծակէց քարին :

Հ. Արշակայ Ա . ին ովլյաջորդէց .

Պ. Իւր որդին Արտաշէս Ա , որ Յունաստանի և բոլոր Փոքր Ասիր տիրէց :

Հ. Ի՞նչ բան արէց Պարսկաստանի մէջ .

Պ. Իւր անուամբն փող գաճէց . և Պարսից թագաւորն որ մինչեւ էն ժահնամալ պատուով առ ոջին էր՝ իւր երկրորդն շինէց :

Հ. Արտաշէսի զօրաց բազմուեն վերայ Բնէ կը պատմուի .

Պ. Կաւեն թէ երբոր բողոքն միաբան նետ զըձէին՝ արևեխ կըխավիանէր . և թէ ուր որ մի մին քար գըձէին՝ մի բլուր կընեանէր :

Հ. Արտաշէս Բնչպէս մեռաւ .

Պ. Օօրաց մէջն խոռովուի Ընկնելով զինքն ըսպանեցին (87) :

Հ. Արտաշէսին ովլյաջորդէց .

Պ. Տիգրան իւր որդին որ արդէն երկու տարէն կիւր իւր հօր հետն կըթագաւորէր :

Հ. Տիգրան Բ . ին առաջին գործքն Բնչ եղի .

Պ. Յունաց նուաճէց, որոնք Արտաշէսի մահն լուլով ապստամբուէլին :

Հ. Տիգրան ում գործէց իւր փոխանորդ Պոնտոսի մէջ, և Յունաց նուաճող .

Պ. Իւր Միհրդատ անուամբ քեռայրն, որ քաջ և խելացի մարդ էր :

Հ. Տիգրան . Բ . Բնչ կրօնական գործողուինէր արէց :

Պ. Այլ և այլ տեղէր մէհեաննէր շինելով . Յունաստանիցն բերած չաստուածների արձաննէր կանգնէց և նոցա քուրմէր հաստատէց :

Հ. Ասորւոց երկրումն Բնչ բան արէց Տիգրան :

Պ. Ասորւոց երկրին տիրէց և նոցա Սիդինէ թա-

գուհին բռնէց սպանէց . վասն զի Սելևկիացւոց
յորդորէլ էր Տիգրանիցն ապստամբուելու :
Հ. Հրէայք երբոր լսեցին Սեղինէ թագուհոյ
սպանուելն ինչ արին .

Պ. Հատ ընծայք տուին Տիգրանին, որ իւրէնց.
Աղէքսանդրա թագուհոյն մի. վնաս չհացնի :
Հ. Ի՞նչ պատճառաւ չոռվմայեցիք Միհրդա-
տայ հետ թշնամացան .

Պ. Վասն զի Միհրդատ կապադովկիոյ իշխելով
իւր Արիարաթ տղէն նոցա համար թագաւոր
դրէց . կապադովկացիք ևս չոռվմայեցւոց դի-
մեցին :

Հ. Չոռվմայեցիք ևս ինչ արին .

Պ. Խսկոյն Սեղրա քաջ զօրապետին ուղարկեցին,
որ եկաւ Արիարաթին, և իւր Գորդիա զօրապե-
տին քշէց, և Արիոբարզան, կապադովկացւոյն
թագաւոր շինէց :

Հ. Միհրդատ էն ժամանակ ինչ արէց .

Պ. Տիգրանիցն օկնուի առնելով կրկնն չոռվ-
մայեցւոց քշէց և Արիարաթին թագաւոր շինէց :

Հ. Չոռվմայեցիք վերստին զօրք ուղարկեցին
Միհրդատայ վերայ :

Պ. Ի՞լև այլ զօրավարնէր սւղարկեցին, որոնց
շատ անգամ յաղթէց Միհրդատ, և Ակիւղաս զօ-
րավարին սպանէց, բերանն հալած ոսկի լցնելով :

Հ. Չոռվմայեցիք ու մուղարկեցին զօրավար
Պ. Ու ուկուղոսին որ շատ անգամ կրուելով եր-
բեմն յաղթուէց ևս երբեմն յաղթէց Միհրդատին:

Հ. Վասն էր Տիգրան Միհրդատայ վերայ
բարկացաւ :

Պ. Ու ասն զի մի անգամ շարաշար յաղթուելով
զուկուղոսիցն փախաւ Տիգրանայ մոտն, և
զուկուղոս շատ տեղարկնքի տիրէց . բայց վեր-
ջրն կրկնն հաշտուէց Տիգրան :

Հ. Տիգրան ինչ պատերազմի մէջ յաղթուէց
զուկուղոսիցն .

Պ. Ու ուկուղոս հայաստան մտաւ Տիգրանակեր-
տին պաշարէց . Տիգրան չոռվմայեցւոց սակաւ-
ուին տեսնելով անհոգ մնաց էլ էր . բայց զու-
կուղոս յանկարծ վերայ վազելով Տիգրանի
զօրքէրն հալածէց և Տիգրանակերտն առաւ :

Հ. Ու ուկուղոսն կարողացաւ իւր յաղթուեն վե-
րայ ուրախանալ .

Պ. Ու վասն զի լսէց որ Տիգրան՝ իւր ուրիշ տեղ
թողած զօրաց վերայ հասանելով մի լաւ ձար-
դէլ էր . և մի փոքր յետոյ իւր վերայ ևս հաւա-
նելով Միհրդատի հետ, վերջապէս հայաստա-
նիցն հալածէց :

Հ. Չոռվմայեցիք զուկուղոսի տեղն ում ու-
ղարկեցին .

Պ. Պոմպէոսին, և զուկուղղոսին յետ կոչեցին :
 Հ. Միհրդատ լնդէր ինքն զինքն սպանէց .
 Պ. Խւր Փառնակէս որդին և կաստոր նախարարն կաշտոք առած չռովմայեցւոց կողմն գընացին . ինքն ևս մի բերդի մէջ անօգնական պաշարուելով ինքն զինքն սպանէց . Պոմպէոսի ձեռքն չընկնելու համար (59) :

Հ. Տիգրան երբոր լոէց Միհրդատայ մեռնելն ինչ արէց .

Պ. Տեսնելով որ իւր Տիգրան որդին ևս առատամբուելայ իւրնից և ինքն ևս ծերացած , հաշտուի արէց Պոմպէոսի հնտ , և սովաւ պատերազմն վերջացաւ :

Հ. Տիգրան Պոմպէոսի երթալէն յետ չռովմայիցւոցից վրէժն առաջ .

Պ. Միջագետաց կրկին տիրէց , և գարիանոս չռովմայեցւոց զօրապետին Եգիպտոս փախցրէց :

Հ. Տիգրան լնդէր Սրշեղ Պագաւորին տուէց կրկին նախապահուե պատիւն .

Պ. Ա ասն զի տեսաւ որ չռովմայեցիք կրկին Ասորւոց և Միջագետաց տիրելով իւր վերայ կզային , որմոց չէր կարող դէմկալիւր ծերուե պատճառաւ , ուստի Արշեղին տուէց նախապահուն՝ որ իւրն օգնէ :

Հ. Հռովմայեցիք Գարիանոսի տեղն հւմ ու

Պարկեցին .

Պ. Կրասոսին . որյաղթուելով սպանուէց հայեցին և Պարթևներից :

Հ. Ո՞վ եղէ հայոց զօրավար Տիգրանայ ծերուե ժամանակում :

Պ. Բարզափրան քաջ նախարարն . որ հայոց և Կարսից բանակին լնդշանուր սպարապետն էր :

Հ. Բարզափրան ինչ կործողութինէր արէց Ասորւոց երկրի մէջ .

Պ. Ասորւ Ասորւոց երկրին տիրէց , և Երուսաղէմն ևս առէց խաբէուք . Թէաէտ և վերջումն կրկին չռովմայեցիք առին հայոց ձեռնիցն :

Հ. Այս յաղթուելիցն յետ Տիգրան հրչափ ապրէց .

Պ. Ը ատ փոքր , ութուն հինգ տարեկան մեռաւ . յիսուն և չորս տարի թագաւորելէն վերջն (35) :

Դաս Ե :
Երանական Ա : Արշակ Աբգուր :

Հ. Ո՞վ յաջորդէց Տիգրանայ .

Պ. Արտաւազդ Ա . Տիգրանայ որդին :

Հ. Արտաւազդ ինչ ձամբայ բոնէց :

Պ. Ինքն զինքն կերխումի տուէց, որով Անտոնինոս Հռովմայեցւոց զօրապետն բոլոր Ասորւոց երկրին և ուրիշ տեղերի տիրեց :

Հ. Անտոնինոս Բնչ պատճառաւ Արտաւագդայ հետ թշնամացաւ :

Պ. Ու ան զի Արտաւագդ Ընդլէմիւր խոստմանն ծածուկ Պարսից օգնէլէր, փոխանակ զի Անտոնինոսին օգնելու խօսք եր տուէլ :

Հ. Անտոնինոս Բնչ կերպով Արտաւագդին ըլունէց :

Պ. Աւելի խաբելով քան թէ քաջուռ բռնէց զինքն և ոսկէ զնջլով կապած Եգիպտոս տարաւ (30):

Հ. Արտաւագդի ըռնելէն յետ Հայաստան վեհակն Բնչակէս եղւ .

Պ. Անտոնինոս տիրեց Հայաստանին և Ստորին Հայքն՝ իւր Աղէքսանդր տղին տուէց, և վերինն՝ Մարաց :

Հ. Արդաւագդին հիլ սպանէց :

Պ. Կղէոպատրա թագուհին, որ կլուխն կտըն տուէց :

Հ. Ո՞րչափ ժամանակ Հռովմայեցիք Հայաստանին տիրեցին .

Պ. Կատ փոքր վասն զի Արշամ Տիգրանի եղւ բօրորդին՝ Պարսից օգնութն Հռովմայեցւոց քըւ-

Հէց և մինչև Կեսարիա տիրեց (28) :

Հ. Ինդէր Արշամ սկսէց Հռովմայեցւոց հարկ տալ .

Պ. (Օ) Հռովմանիցն խնդրեց Արտաւագդի հրէուորդիքն որ Հռովմագերի էին . երբոր նա չուրուէց, յայնժամ Արշամյանձն առէց հարկ տալ, միայն թէ նոքա աղատուեն . ինչպէս որ աղատուեցին :

Հ. Ի՞նչ պատճառաւ Հայոց թագաւորուին երկու բաժնուէց, այսինքն Աերին և Ստորին .

Պ. Ու ասն զի վերին Հայաստանի Հայէրն որ Պարսից ձեռնումն էին, ձանձրացած նոցա տրուած բռնութիւնիցն, Օգոստոս կայսեր գիմեցին . նա ևս Արտաւագդայ որդի Տիգրանին թագաւոր դրեց վասն նոցա, որ փոքր Տիգրան կոչուէց : Այս վերին Հայոց թագաւորուին յիսուն և ինն տարի քշելէն յետ, երուանդ Ստորին Հայոց թագաւորուեն հետ միացրեց :

Հ. Արշամ որչափ ժամանակ թագաւոր եղւ .

Պ. Վրասն ինն տարի խաղաղութ թագաւորէց :

Հ. Արգար Արշամյ որդին իւր Հօն յաջորդիլով ենչ անուն հանէց :

Պ. Իւր խելքուեն և հեղաքարոյուեն համար ամենե քեան սկսան Աւագ այր ասել իւրն, որ վերջումն Ճռմուլով Արգար առաւեց :



Հ. Ի՞նդէր չերովդէս Աբգարու հետ թշնաւ մացաւ :

Պ. Աամն զի չերովդէս կուզէր որ իւր պատկերն ևս Օգոստոսի պատկերի հետ միասին մեշնաց մէջն կախուի . Աբգար էս բանն յանձն շառէց , և պատերազմ բացուելով նոցա մէջ չերովդէս չարաչար յաղթուէց :

Հ. Ի՞նդէր Աբգար չռովմ գնաց :

Պ. Աամն զի չերովդէսի կողմնականնէրն ոխ պահելով Աբգարու վերայ չարախօսուիննէր արին Օգոստոս կայսեր մոտ . նա ևս չռովմ գնաց և զինքն արդարացրէց :

Հ. Աամն էր թագաւորական աթոռն Մծբին քաղաքիցն Նվեսիա փոխարքուէց :

Պ. Աամն զի Աբգար կուզէր չռովմայեցւոցից ապստամբուէր . ուստի աթոռն Նվեսիա փոխէց և մկնեց-ամրացնել դայն :

Հ. Ի՞նչ բանից գրգռուէց Աբգար պատամբուելու չռովմայեցւոցից :

Պ. Տիերերիոս կայսեր ուրախակցուն համար ուղարկած չայ գեսպաննէրն անարգուեցին չըռովմայեցւոցից մի փուչ պատճառի համար :

Հ. Ի՞նչ արգելք եղէ ոք Աբգար չկարողացաւ ապստամբիլ .

Պ. Արտաշէր Պարսից թագւորն մն ոնելով նոյն

օրէրու մն , Պարսկաստան գնաց Աբգար , և նորա որդւոց մէջնկած խռովուին խաղաղէց , Քրիստոսի 21 . թուականումն :

Հ. Ի՞նչ ձախորդուի պատահէց Աբգարին Պարսկաստան :

Պ. Աաստիկ բորոտուէց որ բժշկնէրն չկարողացան առողջացնել , վերջումն թագէսու Առաքեալն բժշկէց :

Հ. Ի՞նչ կերպով Աբգար Քրիստոսին ծանօթացաւ :

Պ. Դմանալով որ իւր ապատամբուն խորհութ գըն Տիերերիոս կայսեր ականջն հասել էր , գեսապաննէր ուղարկէց Պաղեստին չռովմայեցւոց զօրապետի մոտն , որ զինքն արդարացնեն . գեսապաննէրն տեսնելով էն տեղ Քրիստոսի արած հրաշագործուիննէրն եկան պատմեցին նշան :

Հ. Աբգար ինչ արեց էն ժամանակն :

Պ. Թառղթ գրէց Քրիստոսին և իւր Անանէ Սուրհանդակին ուղարկէց ոք Երթայ աղոչէ Քրիստոսին Հայաստան գալու և զինքն բժշկելու . իսկ թէ որ չգայ պատկերն օրինակի և բերէ :

Հ. Քրիստոս կատարէց Աբգարու խնդիրքն :

Պ. Ա՞չ . բայց պատասխան գրէց Աբգարին , և խօսք տուէց որ Համբարձուելէն յետ իւր աշա-

կերտնելիցն մինն կուղարկի որ զինքն բժշկի ։
ինչպէս որ եղեւ թաղէոս Առաքելոյ ձեռնովն
(31) ին :

Հ. Աբգար Քրիստոսի հաւատալէն և բժշկուե-
լէն յետ ի՞նչ արէց .

Պ. Երեք տարի ևս ապրէց և ջոկ ջոկ թուղթ
գրէց Տիրեր կայսեր, Պարսից և Ասորեսոց թա-
գաւ որնէրին՝ ցուցանելով Քրիստոսի Աստ-
ու ածուին . որ ընդ ամէնն երեսուն ութին տարի
թագաւորելէն յետ սրբութ մեռաւ :

Դիաս Օ Անահէ, Սահագիոնէ և Երուսալէմ

Հ. Աբգարու մեռնելէն յետ ընդէր խռովուի
սկաւ չայաստանի մէջ .

Պ. Պատն գի Անանէ Աբգարու որդիին Եղեսիոյ
ս. ջ թագաւորէց և կրկին կուապաշտուի սկսէց .
իւկ Անատրուկ Աբգարու քեռորդին Շաւար-
շանի մէջ թագաւորէց և կուզէր բոլոր չայաս-
տանն ատիրել :

Հ. Անանէ ի՞նչպէս մեռաւ :

Պ. Երբուր իւր թագաւորական պալատն նորո-
գիւ կրտէր, մի սիւն ընկաւ նորա վերայ սպա-
նէց դինքն, չորս առարի թագաւորելէն յետ (38) :

Հ. Անանէի մեռնելէն յետ հվ թաղաւոր եղեւ
չայաստանի .

Պ. Անատրուկ՝ որ Եգեսացւոց երդումուէց՝
Թողնելոյ որ ազատ պաշտեն գՔրիստոս . թէ-
պէտ վերջումն ստէց իւր երդումն և շատ մարդ-
նահատակէց, ինչպէս նա և իւր Սանդուխտ աղ-
ջիկն :

Հ. Անատրուկ քաղաքական շինութեանց մէջ
ի՞նչ երևելի գործք արէց .

Պ. Մծրին՝ որ երկրաշարժուից քանդուէլէր,
սքանչիլի կերպով նորոգէց, և քաղաքի մէջ
տեղն իւր արձանն կանգնէց ձեռքն մի դրամ
տուած . իմացնել ու զելով որ բոլըր ունեցածն
ծախէլայ :

Հ. Անատրուկ ի՞նչ կերպով մեռաւ :

Պ. Որսի ժամանակ լիպուած ով նհտահար մե-
ռաւ, երեսուն չորս տարի թագաւորելէն յետ :

Հ. Անատրկին ով յաջորդէց .

Պ. Երուանդ Բ. որ թէպէտ և Արշակունի էր,
բայց թագաւորական ցեղէ չէր :

Հ. Երուանդ ի՞նչպէս թագաւոր եղեւ :

Պ. Իւր արած քաջուիներովն և քաղղաքա-
րոյութեամբն բոլորի սիրտն քաշէց իւրն, որով
Սանատրկոյ մեռնելէն յետ նախարարներն զինքն
թագաւոր գըին :

Երուանդիւր թագաւորուին ապահովելոյ համար ինչ բան արեց .

Պ. Ի՞սուր Սանատրկոյ ցողն սրով մաշել տուէց, յորոց միայն Արտաշէս անուամբ տղէն զարս կաստան փախաւ Սմբատ Բագրատունոյ ձեռնովն : Հ. Ընդէր Երուանդ Միջադետքն Հռովմայի ցւոց տուէց և ինքն վերին հայքն առաւ .

Պ. Ամս զի լէց Արտաշեսի Պարկաստան փախնելն և ուղեց իւր Թագաւորուին այս կերպով զօջացնել . այս պատճառաւ աթոռն ևս Արմաւիր փոխադրէց :

Հ. Երուանդայ արած շինուեց մէջ մը մըն է երկելին .

Պ. Երուանդաշատ քաղաքն իւր գեղեցկուեն համար, ուր որ վերջն աթոռն ևս փոխադրէց, և Բագրատն իւր մեհնաց համար :

Հ. Ի՞նչ կերպով Արտաշէս իւր թագաւորութիւնն առէց .

Պ. Դարեհ Պարսից Թագաւորի օդնութեամբն, որոյ միջնորդ եղին Սմբատ և Պարսից նախարարէրն (88) :

Հ. Երբոր Երուանդ լոէց Արտաշէսի գայն իւր վերայ ինչ արեց .

Պ. Արովչետե Աւտեացւոց վրայ պատերազմէր զացէլ, իսկոյն հաշտութիւն արեց և առան

վարձով շատ զօրք ժողոված սկսաւ Արտաշեսի վերայ երթաւ :

Հ. Երբոր Հայերն լոեցին Արտաշեսի գայն ինչ կերպով ընդունեցին գինքն .

Պ. Շատ ուրախութեամբ . որով շատ նախարարնէր ամեռղջ իւրէնց գնդովն Արտաշեսի կողն գնացին, յորոց մինն էր Արգամ որ խիստ քաջ մարդ էր :

Հ. Ո՞ր կողմն յաղթէց .

Պ. Արտաշեսի կողմն, որով ստիպուէց Երուանդ փախչիլ Երուանդաշատ :

Հ. Երուանդ ինչպէս մեռաւ .

Պ. Կրկին պատերազմն սաստկանալով Երուանդաշատն առնուեց, և Էնտէղ իւր պալատի մէջ Երուանդն ևս սպանուեց Արտաշեսի զօրքէրիցն (89) :

Դասութեաւ :

ՋԱՐԱՎԱՐ ԵՐԵՐԵՐԻ ԱՆՑ ԶՐՅՈՒԹ :

Հ. Արտաշէս Բ . Թագաւորելով իւր առաջին ցործքն ինչ արեց :

Պ. Խոր բարերարնէրին մեծ պարտեներով պատառէց . Սմբատին ընէհամուր սպարապետ

շինէց, Արգամին իւր երկրորդ։ :

Հ. Ուրիշ հւմ բարիք արէց Արտաշէս։ :

Պ. Գյափակ նախարարի ներսէս անուամբ որդւոյն որն որ մեծ նախարարութիւն արէց Դիմաքսիսն կամ կամսարական անուանելով։ որովէ չեաւ գիսակ դէմքի կէմս կորցրէլ եր պատերազմի մէջ Արտաշէսն ազատելու համար։ :

Հ. Արտաշէս որոնց հետ պատերազմէց։ :

Պ. Ալանաց հետ որոնց յաղթէց և թագաւորի սղին պատերազմի մէջ բռնէց։ :

Հ. Ի՞նչպէս վերջացաւ պատերազմն։ :

Պ. Ալանաց թագաւորի Սաթինիկ աղջիկն Արտաշէսին աղաչելով՝ եղբայրն ազատէց և պատերազմն վերջ տուէց, և ինքն ևս Արտաշէսի թագուհին եղւ։ :

Հ. Արտաշէս քաղաքական բանէրի մէջ ի՞նչ բարեկարգութիւննէր արէց։ :

Պ. Ամենայն բանի կարգ կամոն դրէց և ծաղկացրէց Հայաստանն որով իւր բարեկամաց սիրելի և օտարաց նախանձելի եղլ թէ ինքն և թէ իւր աշխարհքն։ :

Հ. Ի՞նչ մասնաւոր նախարարութիւն հաստատէց Արտաշէս։ :

Պ. Ալանաց կողմանէ Սամթինկայ համար եկած հարսնած ուքն մասնաւոր ցեղ որոշէց Արտաւ-

դեան անուանելով։ :

Հ. Արտաշէս ջանացմւ Հռովնայեցւոցից ամպստամբուելու։ :

Պ. Ե ատ ջանք արէց այս բանի համար Տրայիանոսի տուրք տալն գալրացրէց և Հռովնայեցւոց զօրացն մի քանի անդամյաղթէց։ :

Հ. Արտաշէս Բ. կարողացմւ իւր խորհուրդն առաջ տանել։ :

Պ. Ու. վասն զի երբոր լսէց Տրայիանոսի անթիւրազմութեամբ գտն, վախենալով՝ շատ ընծայք առած զնաց յառաջն և նրա բարկութիւնն դժուրացրէց։ :

Հ. Ուր մեռաւ Արտաշէս։ :

Պ. Ու. արանդ գաւառումն Մարտոց կողմէրէն դառնալու ժամանակ քառասուն մին տարի թագաւորելէն յետ ։ անպէս սգացին զինքն Հայէրն որ շատոնք իւրէնց սպանեցին գերեզմանի վերայ. (129)։ :

Հ. Արտաւազդ Բ. իւր հօր տեղն ցանջորդելով ի՞նչ գործ ողութիւն արար։ :

Պ. Օքոսանք սիրող և անկարգ կէտնք ունեցաւ, բոլոր իւր եղբարցն մոտիցն քչէց, միայն Տիրանին մոտն պահէց, իւրն յաջորդ շինելու համար։ :

Հ. Արտաւազդ ի՞նչպէս մեռաւ։ :

Պ. Որսի գնալոյ ժամանակն մի փոքի մէջ լնկառ և կորաւ, երկու տարի թագաւորելէն յետ ։
Հ. Տիրան Ա. իւր եղբօրն յաջորդելով թնչ ձամբայ բռնէց ։

Պ. Եղբօր անկարգ և անհոգ ձամբէն ։ նոյն պատճառաւ տասն երեք տարի թագաւորելէն յետ կառավարութիւնն Երախնաւու անուամբ իշխանին յանձնէց և ինքն Եկեղեաց զաւառն զնաց ։

Հ. Սորա ժամանակում Հռովմայեցիք թնչպէս էին Հայոց հետ ։

Պ. Երբօր Անտոնինոս Պիոսն կայսր եղեւ, Տերան խնդակցութեան դեսպան ուղարկէց հարկն ևս՝ իմիտասին ։ Անտոնինոս սիրով ընդունէց, և Թագ ու Տիրանի ուղարկէց Տիրանին և փող Թափել տուէց ձեռն Տիրանայ ուսի վերայ դրած ։

Հ. Տիրան թնչպէս մեռաւ ։

Պ. Վասն երկու տարի թագաւորելէն յետ մի օր ձամբայ գնալու ժամանակում՝ մի Տիւս ձեան վերէն փլաւ և խեղլէց զինքն (151) ։

Հ. Տիրանին հվ յաջորդէց ։

Պ. Տիրան Գ. իւր պատիկ եղբայրն՝ որ Պիրող Պարսից թագաւորի հետ միացած յաղթէց Հըռովմայեցւոց և Աւերիանոս զօրակարին ևս ըս-

պանէց ։

Հ. Տիրան այս յաղթութիւնիցն յետ թնչ ձաւ խորիութեան հանդի գէց ։

Պ. Եւրեղիոս Կայսրն Սեւլով այս ելածնէրն՝ Ա. Երոս Ղուկիոս իւր կայսերակիցն ուղարկէց որ Եւկաւ իւր թշնամեացն յաղթէց և Տիրանի վերայ խղճուլով գերու թիւնից աղտոտէց, որ մի կողջից խարուելով բռնուէլէր Միջազետի կողմէրն գնացած ժամանկումն ։

Հ. Տիրան Գ. ին հվ յաջորդէց ։

Պ. Աղարշ իւր որդին ։ սորա ժամանակում Հայաստանի վերայ եկան Հիւսիսային աղդէրն, ինքն ևս քաջութեամբ պատերազմելով քշէց ։ Բայց ինքն ևս վիրաւորուելով մեռաւ, քսան տարի թագաւորելէն յետ ։

Հ. Խոսրով Ա. թագաւորելէն յետ իւր առաջի գործողութիւնն իրն եղեւ ։

Պ. Հիւսիսային աղգաց վերայ պատերազմ գընաց, իւր Հօր մահուան վրէժն առնելու համար և յաղթէց (214) ։

Հ. Անտոնինոս Կարակալլա ի ոսրովին թնչարէց ։

Պ. Կարակալլա երբոր Միջազետի կողմէրն եւկէլէր ։ Խոսրով յառաջն զնաց պատուելոյ համար զինքն ։ Բայց Կարակալլա զինքն չթողէց որ յետ գառնայ, մինչեւ որ Հայէրն կատաղած

սկսան կարակալ լային վերայ վագել :

Հ. Բնդէր Արտաշիր Պարսից թագաւորն ջտացաւ խոսրովին սպանելու .

Պ. Արտաշիր Պարսից Արտաւան թագաւորն սպանէց որ Արշտկունի էր աղդաւ և ինքն թագաւոր եղեւ, վասն որոյ Խոսրով գնաց նորադէմ, և շատ անգամ յաղթելով մինչեւ Հնդկացան փախցրէց զինքն և չէր թողնել որ հանգիստ թագաւորէ :

Հ. Արտաշիր երբ որ պատերազմելով չկարողացաւ Խոսրովին յաղթել ինչ արէց .

Պ. Մեծամեծ բանէր խոստացաւ էն մարդին որ Հայաստան երթալով Խոսրովին սպանի :

Հ. Ովկյանձն տուէց այս բանս .

Պ. Ինակ Պահլաւունին . որ Հայաստան եկաւ, ձեւացնելով որ Արտաշրի բռնութիւնից փախէայ և ճամբառմն գալու ժամանակ ծնաւ իւր որդին մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն :

Հ. Ինակ Բնչպէս կատարէց, իւր չարութեան խորհուրդն .

Պ. Մի օր որսի Ժամանակում նետով տուէց ըստ սպանէց Խոսրովին, և երբոր թագաւորի մոտի մարդին զինքն կուղին սպանել, փախնելու ժամանակ գետն ընկու և խողլուէց (259) :



Դաս Բ
Տրդաց և Խոսրով Բ. 8

Հ. Մեծ Խոսրովու մեծնելուցն յետ Հայոց վիճակն Բնչպէս եղեւ :

Պ. Եկաւ Արտաշրի և բոլոր Հայոց տիրէց և Խոսրովու ցեղն ջնջել տուէց, յորոց Տրդատ անուամեր մանուկն և նորա Խոսրովիդուխտ Քոյրն ագատուեցին Արտաւազդ Մանվակունոյ և Օտա Ամատունոյ ձեռնովն :

Հ. Տրդատին ուր փախցրէց Արտաւազդ Մանվակունին :

Պ. Կախ Եկաւրիա, վերջն Հռովմ, ուր շատ քաջութիւննէր անելով մեծ պատուոյ հաստ :

Հ. Արտաշրի որշափ ժամանակ տիրէց Հայոց վերայ և ինչ գործազւթիւն արէց :

Պ. Արտաշրի անկած սահմանագրիի քարերի վերայ արձանագրաւթիւննէրն աւերել տալով՝ իւր անումն զրել տուէց պարսկերէն . քւան վեց տարի իշխէց Հայոց և Պարսից վերայ և մեռաւ :

Հ. Արտաշրին հզ յաջորդէց .

Պ. Եւր Շապուհ որդին . որոյ ժամանակումն Տրդատ Հռովմայեցի զօրքով եկաւ և առաւ իւր Հայրենական ժառանգութիւնն :

Հ. Տրդատ Բնչ արդիւնք ցոյց տուեցոց հռովմայեցիք իւրն օդնու թիւն տուին .

Պ. Դիմոկղիսիանոսի կողմնէ Գովթայոց Հռովմակայ և քաջ թագաւորի հետ մենամարտութիւն անելով, յաղթէց նրան և հռովմայոց մի մեծ նախատանքիցն աղատէց :

Հ. Երբոր Տրդատ կնարիս հասաւ՝ հայերն Բնչպէս ընդունեցին դինքն .

Պ. Բոլոր նախարարներ յառաջն գնալով զինքն կոկին թագաւոր գրին, և բոլոր Հայաստանին մեծ ուրախութիւն եղիւ (236) :

Հ. Տրդատ Հայաստանի տիրելէն յառաջ ուրիշ Բնչ կործ ողութիւն արար .

Պ. Եկեղեց կաւառն զնաց Անահիտ կոքին չնորհակալութիւն անելու համար . և էն տեղ իմանալով ոք Գրիգոր Լուսաւորիչն քրիստոնեայ և Անակայ որդին է, շատ շարչաբելէն յետ զինքն մի խոր պիրապի մէջ գձել տուեց :

Հ. Բնչպէս Տրդատ Ըապուհ թագաւորին քչէց Հայաստանիցն .

Պ. Երեք անդամ Ըապուհ պատերազմեց, բայց երեք անդամն ևս յաղթուելով՝ թողց Հայաստանն և մինչև Ստրպատական աշխարհքն փոխաւ : Ուրիշ շատ յաղթութիւննէր և քաջութիւննէր անելով Տրդատ բոլոր մատակայ աղջայ

սիրտն վախ գձեց :

Հ. Տրդատ քրիստոնեաց հալոֆելոյ հանարիս պատիժ կրէց .

Պ. Որովհետև Հռովմից եկած Հռիփոխմեանց կուսանաց նահատակէց, ինքն ևս յԱստուծոյ պատժուելով որոի ժամանակում խողի կերպարանք փոխուեց և վայրենացաւ . իշխաննէրիցն շոտն ևս միւնքն պատիժն գտան :

Հ. Ո՞վ բժշկէց դՏրդատն :

Պ. Ուռը Գրիգոր Լուսաւորին որ տասն չորս տարի վիրապի մէջ մնալէն յետ գեռեւս կենդանիէր Աստուծոյ հրաշքովն . և վիրապիցն դուս գալով բժշկէց զՅր բաժն և բոլոր նախարարնէրին, և զՔրիստոս քարոզն լով հալոֆեց զիստար կուազալութեան Հայաստանիցն, ինքն ևս կեսարիս ուղարկուելով Արք Խպիկոպոս ձեռն սբուեց ուրբ Վեռնէիցն, և անտի վերաբառնալով մկանուց զՅր բաժն և զՏինդ միլիոն հունի :

Հ. Տրդատ քրիստոնեայ ելնելէն յետ Բնչ մասնաւոր գործողութիւն արար .

Պ. Լոելով որ կուտանատիանոս ևս քրիստոնեայ է եղէլ, որոյ տեսութեան համար Հռովմ գնաց, ուր կոստանտիանոս Տրդատայ հետ վաշինք գրէց քրիստոնեութեան հաւատքն միշնորդ բռնելով

և լկուց թափառորութեանց մէջ սէրն հաւասարմութեամբ սահմանագիր հաւար :

Հ. Տրդատ Հռովմայ քաղաքից դառնալուցն յետինչպէս գտաւ Հայաստանն :

Պ. Ըստուհի Հիւսիսիային ազգաց հետ միացած Հայաստանի վերայ էր վաղէլ Տրդատ շուտով պատերազմ պատրաստելով հալածէց բոլորին, և Հիւսիսային ազգաց Գեղուե հն անուտամբ քաջ զօրավարին մին տալովն ձիուլն հանդերձ երկու կտոր արէց : Այս պատերազմներովն Տրդատ ըուլոր Հայոց քաղաքնէրն ազատէց Պարսից ձեռնիցն՝ որոնց որ բռնութեամբ տիրէլին :

Հ. Ի՞նչպէս մեռաւ Տրդատ :

Պ. Տեմնելով նախարարաց անկարգութիւննէրն՝ թողէց թագաւորութիւնն և լուսաւորաց ձգնարանն զնալով կրնակուէր անդ . նախարարնէրն կրկին անգամ զինքն կոչելէն յետ թոյն տուին իւրն . և այսպէս մեռցրին լիսուն վեց տարի թագաւորելէն յետ (341) :

Հ. Տրդատայ մեռնելէն յետ ի՞նչ խոռովութիւննէր եղին Հայաստանի մէջ :

Պ. Ալուամնք ապստամբուեցին և Սանատրուկ անուամբ մին իւրիանց վերայ թագաւոր դրին նոյնպէս նա և Բակուր Աղճնեաց իշխանին . իւկ բզնունիք, Մանաւաղնամք և Որդունիք իրար

գէմ զնալով միմանց ջարդեցին :

Հ. Տրդատայ ով յաջորդէց :

Պ. Եյախարարնէրն տեսնելով այս անկարգութիւննէրն Սուրբ Առթանէս Կաթողիկոսի հետ միացած Տրդատայ որդին Խոսրով երկրորդին թագաւոր դրին Կոստանդ կայսեր հաճութեամբն, որն որ թագ ու Տիրանի ուղարկէց :

Հ. Խոսրով Բ. Թագաւորելէն յետ ինչ գործողութիւննէր արէց :


Պ. Խւր մեղկութեամբն և անհոգութեամբն ամեննէն յիշատակի արքանի մի գործ ողութիւն չարէց . Դուին(պրս . Բլու թ) քաղաքն շնէց և աթոռն էն տեղն փոխադրէց :

Հ. Խոսրովու ժամանակ ի՞նչ երկելի զօրաւար կէր հայաստան :

Պ. Ա ահան Ամատունին . որ մի մեծ յաղթութիւն արէց Ծապէց և Հիւսիսապէին ազգաց գէմ, որոնք յառաջ Խոսրովին յաղթելով մինչեւ Ա. աղարշապատ հասէլին :

Հ. Խոսրով ո՞քչափ ժամանակ թագաւորէց :

Պ. Ինն տարի . իւրն յաջորդէց իւր որդին Տիրան Բ. (353) :



Դաս
Թ.
Տեսն և Արշէ :

- Հ. Տիրան թնչ կերպով թադտորէց .
 Պ. Աւըք Ա. թանհի հ'տ Սոսմզու գնայ և
 էնտեղ կոստանտ կայսրէ թադտորէցոյց զինքն ։
 Հ. Ըստուհ երբ որ լէց Տիրանայ Սոսմզու
 երթալ թնչ արար .
 Պ. Անթիւ զօրք տոլովիւր հ'րուէ հ'լուր ձեռն
 չայառան ուղորկէց որ երթայ թադտորէ
 չայոյ վ'րայ . բաց Ա. շաւիր Կայարական ,
 որում յանձնուած էր չայառան . նախս սրաց
 նէրին մի սյուլով յալթէց և քշէց զ'ներուէն :
 Հ. Տիրան երբոր չայառան դորձաւ թնչպէս
 սկսէց կառավարն իւր տէրով թիւնն .
 Պ. Բալըրովին անկարդութեամբ և թուլուք .
 Էս պատճառաւ Ըստուհի հ'տ հաշութիւն
 իսուէց և սկսէց տուրք տալ նրան ևս ինչպէս
 կուէր Յունայ :
 Հ. Տիրան վասն էօ սուրք Յուսին հայրա պետին սպանէց .
 Պ. Առան զի երբոր Յուլիանոս ուրացող կայսրն
 պարսէց վերայ կերթայր , իւր պիղջ պատկերն
 ուղարկէց Տիրանին որ եկեղէցւոյ մշջն կախ տայ .

երբոր սուրք Յուսիկ հայտառէց էս բանիս և
 պատկերքն ոտքի տակն առնելով կոտրատէց ,
 թադտորն բաշկութիւնիցն անչափ ծեծել
 տուեց սուրք և սյրա դետին՝ որ մեւաւ :

Հ. Անդրէր Ըստուհ Տիրանի աչքերն փորել
 առեց .

Պ. Աան զի Տիրան իւր երբեման գէմ Յուլիա-
 նոսին օդնէլ էր Պարսից վերայ երթալու ժամա-
 նակումն , Ըստուհն ևս այս բանիս վրէժն տո-
 նելու համար խարէութեամբ իւր մնան կոչեց
 Տիրանին և աչքէրն փորել ապլով նուաշ ա-
 ւանն ուղարկէց (362) :

Հ. Տիրան թնչպէս մեռաւ .

Պ. Աի անգամ իւր Արշակ տղնն մի յանդիմա-
 նութեան թուղթ գրէց . Արշակ ևս բարկանալով
 սովանիւ տուեց զ'այրն :

Հ. Արշակ իւր չօր տեղն յաջորդելով թնչպէս
 կոռավարութիւն պահէց .

Պ. Խւր չօր պէս անկարդ և քան զան ևս լատ
 որով աղդի միջի ելած խնդիրութեան և ան-
 կարդութեան պատճառ և յառաջացուցիչ
 եղւ :

Հ. Արշակայ ժամանակ թնչ երեկոի մարդ կեր
 չայառառնում .

Պ. Ահծն Ներէս սուրք չայրա պետ որ լոււա-

ւարչայ թռուի թռոան էր, որն որ շատ մեծամեծ բարիք արէց թէ ազգին և թէ թաղաւորութեանն :

Հ. Ա ամն էր Վաղենտիանոս Արշակայ զերայ պատերազմ բացաւ .

Պ. Ա ամն զի Արշակ Վաղենտիանոսի ու զարկած զեսպաննէրն, որոնք եկէլ էին համոզել զԱրշակն Պարսից ծառայութիւննիցն յետ կալը՝ արհամարհէց . Էն ժամանակ կ ազենտիանոս ևս մեծ պատրաստութեամբ իւր թէոդոս գօրապետն ուղարկէց որ եթքայ այս արհամարհանաց վրէժն լուծ պնէ :

Հ. Ո՞վ գալրացրէց Վաղենտիանոսի բարկուին . Պ. Են ծն Ներսէս . որ Ստամբուլ գնաց և իւր սքանչելի և քաղցր խօսքէրովն համոզէց զթագաւորն, և ամեն քան կարդի գիէց :

Հ. Արշակայ արած անիրաւ սաւանուին որն է . Պ. Իւր Տրդատ եղբօր Գնէլորդու ոյ սպանուին, ունեցած հարստութեան և կնոջ զերայ նախանձելով . որով Գնէլայ Փառանձեմկին իւր համար երկրորդ կին առաւ . նա ևս Ռւշիմպիադա Արշակի կնոջն թռւաւորէց :

Հ. Արշակ ենչպէս շինէց Արշակաւան քաղաքին .

Պ. Այս քաղաքն իւր անուամբն շինէլ սկսէց

և հրաման հանէց որ առն անզգամել չարագործ մարտիկի էն տեղ փախնելով աղասուեն . որով փոքր միջոցում բոլոր քաղաքն լցուէց :

Հ. Ի յա անիրաւ հրամանի հետևանքիցն Բնչեղու .

Պ. Այս ամրագութիւն բարկացած ։ Ծագուհին իւրենց օջնութիւն կուտցին, և նորա օջնութիւն Առշակաւանն կործանէցին, բնակիչներն ջարդեցին բաց ՚ի տշուոց և Արշոկին ևս փախցըրին որ գնայ Վարաց ապաւինէց :

Հ. Արշակ Վ. բաց ազգին օջնութիւն գտնւ .

Պ. Այս շատ զօրք ժողովածն նախարարնէրի հետ սկսաւ պատերազմեւ . և երկու տարի չափ երկու կողմիցն ևս մեծամեծ ջարդուածք ելան . էն միջոցում Վաղէս Կայսրն ևս Արշակայ զէմ զօրք ուղարկէց, լսելով որ Հակուհին օկնէլայ Յունաց վերայ գալըւ ժամանակ :

Հ. Արշակ եցք որ ամեն կողհանէ թշնամնէրից պաշտուէց, թնչ հասք մոսձէց .

Պ. Արիշ անգամնէրի պէս կրկին Սուրբ Ներսէսին ապաւինէց . նա ևս շոտ դժուարութնախարարնէրին հաշտացրէց թագաւորի հետ, և վերջն Առշակի որդի Պաղին պատահ առած գնաց Սուարգու Առէս կոյմեր մօո . բաց Վաղէս Արիստեան լինելով կրկին քշել տուէց Սուրբ

Ներսէսին և դաշինքն ևս չընդունէց :

Հ. Երբոր լսէց Արշակ սուրբ Ներ ՚ի ՚ի աք-
սորու ելն ինչ արէց .

Պ. Ակսէց արձակ համարձակ իւր անկտրգու-
թիւններն զօրծել . շատ մարդ անիրաւութեամբ
սպանէց . որով կրկին խռովութիւննէր սկսան :

Հ. Արշակ ինչպէս բռնուէց .

Պ. Շապուհ սիս ունելով Արշակայ վերայ՝
կրկին շատ զօրք ուղարկէց , նոցա չետ միացան
նա և նախարարնէրն , և Արշակին էն աստիճան
նեղն գձեցին որ պարսից անձնատուր եղլ :

Հ. Շապուհ ինչ արէց Արշակին .

Պ. Մի լու յանդիմաննելէն յետ Անյուշ կոչ-
ուած բերդն ուղարկէց :

Հ. Շապուհ ինչ կերպով ջանացաւ Հայէրին
արևապաշտ շինելու .

Պ. Մերուժան Արծ րունի և Վահան Մամիկո-
նան ու բացող նախարարնէրին թագ խոստացաւ
և շատ զօրք տուէց նոցա ձեռն որ երթան Հայ-
էրին արևապաշտ շինեն . նոքա ևս ամեն չարիք
հաւցրին Հայոց(378) :

Հ. Արշակ ինչպէս մեռաւ .

Պ. Ասելով այս բոլոր ելած չարիքն յուսա-
հատուելով ինք զինքն սուանէց , քան տարի
թագաւորելէն յետ :

Պատ ժ .

Ալար և Վահանդակ :

Հ. Ի՞նչ կերպով Հայէրին այս թշուառուի-
նէրիցն ազատուեցին .

Պ. Սուրբ Ներսեսի աղաչանքովն՝ Մեծն թէ-
ողոս Արշակի որգե Պապին թագաւոր դրէց
Հայոց վերայ . և Յունաց զօրքով Հայաստան
ուղարկէց , որոնք եկան Պարսիկնէրին քշեցին
(381) :

Հ. Ի՞ս պատերազմի ժամանսկում սուրբ Ներ-
սէս ինչպէս օգնէց Հայոց բանակին .

Պ. Երբար երկու կողմիցն ևս աչեղ պատրաս-
տութեալ կըպատերազմէին՝ ոուրբ Ներսէս Նը-
պատ լերան վերայ ելաւ և բազկատարած սկսէց
աղօթել . որով մի քամի եկաւ և Պարսից նե-
տէրն իւրեանց վերսյ կդարձնէր . և արևի յան-
դէպ մի սմակ զալով արեն ծածկէց որ Հայէրին
չնեղէ :

Հ. Ո՞վ վեր նացրէց պատերազմն .

Պ. Միբատ Բագրատունին , որ մերուժան Հայ
ու բացող իշխանի հետնէն վազելով բռնէց զին-
քըն և տաքացրած երկաթէ շամփուրն պսակա-
մէ գլխին զնելով աւաց . Ոսկաւ կպսակեմ ,

զքենգ, Մերուժան: որ կուղիր թագաւոր լինել Հայոց,, և այսպէս սպանէց զինքն, որով կպատերազմն վերջացաւ:

Հ. Պատերազմը թագաւորէց ինչ գործողութիւննէր արար:

Պ. Յունաց զօրքին առատ պարդեռով յետդարձրէց, և ինքն ու նախարարնէրն ՚ի միասին խօսք տուին Սուլրբ Ներսեսին որ յետ այնու հաւատարմութեամբ ծառայեն Աստուծոյ:

Հ. Ինդէր Պատեր Սուրբ Ներսեսին թոյն տուէց:

Պ. Ուստի զի սկսէց իւր արած չարութիւննէրն և անհարդութիւննէրն յանդիմանեն: Պատշկարողանալով յայտնի մեռցնել՝ թոյն տուէց նրան (383):

Հ. Ու ասն Է՞՞ Թէ՛ոդոս կայսրն Պատին սպանել տաւէց:

Պ. Ու ասն զի Պատ կայսերից ապստամբուելով, Տերենտիանոս կայսեր զօրավարին քշէց Հայաստանիցն բայց վերջումն յաղթուելով բռնուէց: Թէ՛ոդոս կայսրն ևս գլուխն կտրել տուէց երեք տարի թագաւորէլէն յետ:

Հ. Պատի տեղն ով յանորդէց:

Պ. Թէ՛ոդոս քաջ Վարազդատ Արշակունոյն թագաւորեցոյց, ող քաջութիւններովն երևելի եղեւ Յունաց մէջ:

Հ. Ու արագդատայ գլխաւոր քաջութիւննէրն որո՞նք են:

Պ. Թագաւոր չելած՝ մի սնգամ հինգ լինդուրարտացոց հանդէպ գնալով հետ զհետէ հընդին ևս սպանէց: մի բերդի վերայ վազելով տաւուն եօթն հոգի իրար հետ նետով սպանէց և ինքն չվնասուէց: գարձեալ քան երկու կանգուն գետի վերնիցն մի շնչով թուաւ:

Հ. Ինդէր Վարագդատ կայսերիցն ապստամբուէց:

Պ. Տեսնելով որ Յունաց զօրավարնէրն կուզեն իւր վերայ իշխել՝ չդիմանալով այս բանիս, Շապուհի օգնութեամբն ուղէց ապստամբուիլ:
